ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվական, N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի մայիսի 15-ի հերթական թիվ 6 նիստի հետևյալ օրակարգը՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի մայիսի 15-ի հերթական թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային եղանակով օտարելու թույլտվություն տալու և նրանց մեկնարկային գները հաստատելու մասին.
   1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային 06-069-0146-0003 ծածկագրով հողամասն օտարելու մասին.
   1.4 Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղի, 5/2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.34 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու և Ալավերդի համայնքի ավագանու 31.03.2022թ. N 21-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
   1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-002-0045-0023 կադաստրային ծածկագրով 0.47498 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք հողամասը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.
   1.6 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.
   1.7 Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0204-0056 ծածկագրով 0.0019 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

1.8 Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղի 6-րդ փողոց, 29 հասցեում գտնվող, 06-069-0070-0036 ծածկագրով, 0.02435 հեկտար հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին.

1.9 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.10 Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին.

1.11 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 136-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

1.12 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը անհատույց օգտագործման իրավունքով և անժամկետ «Լոռի» ջրօգտագործողների ընկերությանը հանձնելու մասին.

1.13 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 15 հունվարի 2024 թվականի թիվ 09-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

1.14 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

1.15 Ալավերդի համայնքի «Թիվ 1 ԲՇՏ» և «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ների խորհուրդների նոր կազմեր հաստատելու և վերստուգող նշանակելու մասին

1.16 Ուսանողներ Սվետլանա Վիտալիի և Լուսինե Վիտալիի Դանիելյանների ուսման վարձի մասնակի փոխհատուցման մասին

1.17 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-003-0039-0017 կադաստրային ծածկագրով 46.2 քմ մակերեսով գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին

1.18 «ՏՏՎ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի և Ալավերդի համայնքի միջև 11.05.2021թ-ին կնքված «Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման» և 07.05.2022 թ-ին կնքված «Անշարժ գույքի վարձակալության» պայմանագրերի լուծմանը համաձայնություն տալու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			

5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մայիսի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի